



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31 հոկտեմբերի, 2016 թ.

ք. Երևան

Քիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. ամփոփիչ աշխատառոյով

2016 թվականի հոկտեմբերի 29-30-ին Ադվերանում Իրավաբանների հայկական ասոցիացիան, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ԲՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպեց հակակոռուպցիոն աշխատառոյով «Քիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. ամփոփիչ աշխատառոյով» խորագրով: Աշխատառոյովը կազմակերպվեց Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ համաֆինանսավորմամբ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Աշխատառոյովին մասնակցեցին պետական մարմինների, քիզնես կազմակերպությունների, քիզնես միավորումների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատառոյովը իրենից ներկայացնում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Ադվերանում կազմակերպված «Քիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Քիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատառոյովների շարունակությունը և ամփոփումը:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) նախագահ, Հայաստանի ԲՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Չաղոյանը նշեց, որ արդեն մեկ տարի է, ինչ աշխատանք է տարվում ուղղված քիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերի փաստորոշմանը, որ կառավարությանը հիմնականում էրկայացվել են պետական գնումների ոլորտի խնդիրները, ձեռք է բերվել պայմանավորվածություն և արդեն կան հանձնարարականներ: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող Նաիրա Գյուլնազարյանը նշեց. «Այս փուլում արդեն հնարավոր է արձանագրել, թե որքան հաջողություն է ունեցել «Կառավարություն-ԲՀ-Բիզնես կազմակերպություններ» ձևաչափով տարված մեկամյա աշխատանքը»: ՀՀ ԿԳ Ղեկավարական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանը շեշտեց, որ ՊԵԿ-ում մեծ կարևորություն է տրվում կոռուպցիայի դեմ պայքարին՝ նշելով. «Մեզ համար կարևոր են այս ձևաչափով աշխատանքները, քանի որ դրանց ժամանակ վեր են հանվում այնպիսի խնդիրներ, որոնք շատ հաճախ մեզ՝ պետական մարմինների ներկայացուցիչներին, հասանելի չեն»:

Աշխատառոյովի առաջին օրը զեկուցողների կողմից ներկայացվեցին մաքսային և հարկային, պետական գնումների, ազատ մրցակցության և մոնոպոլիաների, լիցենզիաների և թույլտվությունների ոլորտներում վերոնշյալ ձևաչափով անցկացված քննարկումների արդյունքները, ինչպես նաև. կայացան նոր քննարկումներ: Որպես խնդիրներ առանձնացվեցին, օրինակ, ՓՄՁ-ների և սուպերմարկետների գործարքներում առկա կոռուպցիան, մաքսագերծման գործընթացի բարդությունը, չափազանց բարդ օրենսդրությունը և վարչարարությունը, գործարքի գնի չկիրառումը, կոռուպցիայից կաղերի առկայությունը: պետական գնումների ոլորտում թափանցիկության խնդիրը, էլեկտրոնային գնումների մրցույթների վստահելի չլինելը (մրցույթների 20%-ը չեղյալ է համարվում): շինարարական լիցենզիաների բազմազանությունը (յուրաքանչյուր լիցենզիայի դեպքում՝ 80 հազար դրամ պետական տուրք) և պահանջով անհրաժեշտ փաստաթղթերի՝ օրենսդրությամբ կարգավորված չլինելը:

Աշխատառոյովի երկրորդ օրը կայացան խմբային աշխատանքներ՝ ըստ ոլորտների: Մշակված առաջարկություններից էին՝ գործարքի գնի մեթոդի կիրառման վերաբերյալ հուշաթղթիկները՝ հրապարակումը: գնումների ոլորտում կոռուպցիայի նվազեցման նպատակով իրական սեփականատերերի բացահայտումը, պետական գնումների վերաբերյալ կայքերի պարզեցումը և վերազինումը: մի շարք օրենսդրական բարեփոխումներ տնտեսական մրցակցության և լիցենզիաների տրամադրման ոլորտում, այդ թվում՝ թափանցիկության ապահովումը և տնտեսվարողին արտոնություններ տալուց առաջ փոքր և միջին քիզնեսի վրա դրանց ազդեցության ուսումնասիրումը:

Միջոցառման արդյունքում հավաքագրված ոլորտային առաջարկությունները քննարկման համար կուղարկվեն ՀՀ կառավարության և այլ պատկան մարմինների, ինչը կնպաստի ոլորտում արդյունավետ հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ԲՀ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում հզորացվել են ԲՀ-ների և ՉԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, որի նպատակով ՀՀ մարզերում 105 ԲՀ-ների և ՉԼՄ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են փոքր ենթադրամաշնորհներ 15 ԲՀ-ների և ՉԼՄ-ների: Ծրագրի շրջանակներում 2014 թ. ստեղծվել է Հայաստանի ԲՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ԲՀ-ներից: Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ԲՀ-կառավարություն կայուն երկխոսության մեջ: Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և վերոնշյալ կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման շուրջ:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Ծրագրի հանրային կապերի համակարգող Նաիրեն Կարապետյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00: հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ <http://www.armla.am>: Կատարող՝ Նաիրեն Կարապետյան, էլ. փոստ՝ info@armla.am:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Շեռախոս՝ +37410 54 64 94 Շեռապատճեն՝ +37410 54 64 95



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից Շեռախոս՝ +374 10 229610 Շեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Իրավաբանների հայկական ասոցիացիա Շապե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 54 01 99 Շեռապատճեն՝ +37410 58 02 99



Ինֆորմացիայի ազատության կենտրոն Շապե Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 56 03 60 Շեռապատճեն՝ +37410 56 03 60